

# ՄԱՆԿԱՆ ԿԱՄՈՒՐՁ ՀԱՅ ԳԻՐՔԻ ԵՒ ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ

*Posted on July 5, 2012 by Keghart*



Category: [Opinions](#)



Արամ Քհլյ. ՏԵՅԻՐՄԵՆՃԵԱՆ, Շարճա, Սիացեալ Արաբական Էմիրութիւններ, 5 Յուլիս 2012

Մեծի Տանն Կիլիկիոյ արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, հայրապետական Սրբատառ կոնդակով, 2011 տարին հռչակած Էր “Հայ Մանուկի Տարի”։ Այս առթիւ, ընդառաջելով Վեհափառ Հայրապետի սրբազան կոչին, Արաբական Ծոցի երկիրներու Աստուածաշունչի Ընկերակցութեան գրասենեակի ընդհանուր պատասխանատու եւ գործադիր քարտուղար՝ Պրն. Հրայր Ճեպեճեան, անձամբ նախաձեռնեց մանուկներու եւ պատանիներու համար նախատեսուած ՄԱՆԿԱ-ՄԵՍԻԱ գրքի Հայերէն տարբերակի հրատարակութեան գործին, որ այսօր, արդէն իսկ մեր տրամադրութեան տակ է եւ մաս կը կազմէ հայ հոգեւոր գրականութեան մատենաշարին։



Արամ Քհլյ. ՏԵՅԻՐՄԵՆՃԵԱՆ, Շարճա, Սիացեալ Արաբական Էմիրութիւններ, 5 Յուլիս 2012

Մեծի Տանն Կիլիկիոյ արժանընտիր Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, հայրապետական Սրբատառ կոնդակով, 2011 տարին հռչակած Էր “Հայ Մանուկի Տարի”։ Այս առթիւ, ընդառաջելով Վեհափառ Հայրապետի սրբազան կոչին, Արաբական Ծոցի երկիրներու Աստուածաշունչի Ընկերակցութեան գրասենեակի ընդհանուր պատասխանատու եւ գործադիր քարտուղար՝ Պրն. Հրայր Ճեպեճեան, անձամբ նախաձեռնեց մանուկներու եւ պատանիներու համար նախատեսուած ՄԱՆԿԱ-ՄԵՍԻԱ գրքի Հայերէն տարբերակի հրատարակութեան գործին, որ այսօր, արդէն իսկ մեր տրամադրութեան տակ է եւ մաս կը կազմէ հայ հոգեւոր գրականութեան մատենաշարին։



ՄԱՆԿԱ-ն հայացուած օրինակն է Անգլերէն լեզուով Ճափոնի մէջ հրատարակուած առաջին բնագրին։ Իր տեսակին մէջ, ՄԱՆԿԱ-ն եզակի գիրք է։ Նոր սերունդին ճաշակով դասաւորուած Աստուածաշունչի գունազարդ հրատարակութիւն մըն է ան, որուն նպատակն է, Աստուծոյ խօսքը տանիլ դէպի մանուկին ու պատանիին հոգեկան աշխարհը։ ՄԱՆԿԱ-ն կ'ընդգրկէ Քրիստոսի ծնունդէն մինչեւ խաչելութիւն ու յարութիւն երկարող ժամանակաշրջանը եւ իր մէջ կ'ամփոփէ Քրիստոսի երկրաւոր կեանքի կարեւորագոյն դրուագներն ու տնօրինական դէպքերը։ Անկասկած, ՄԱՆԿԱ-ն գունազեղ ծաղկեփունջն է Նոր Կտակարանին։

Դժբախտաբար, մանկապատանեկան հոգեւոր գրականութեան կալուածէն ներս, Հայերէն լեզուով հրատարակութիւնները սակաւաթիւ են։ Այս իմաստով, Մանկան կարեւոր հրատարակութիւն մըն է, որ կոչուած է, պարզացուած հայերէնով, նորահաս սերունդը ընտելացնել աստուածաշնչական դրուագներուն ու շունչին։

Այսօր աշխարհին մէջ, մեր մանուկներն ու պատանիներն ալ կլանուած են

համակարգիչով եւ համացանցով, ենթակայ են բարոյական սայթաքումներու, գայթակղութեանց եւ խարխափումներու, շարունակաբար կ'ապրին արժեքներու շփոթ եւ այս ժխորին մէջ, կը դժուարանան կարելորդ գատորոշել անկարելորէն:

Ահաւասիկ, մեր նորագոյն սերունդի բարոյական դաստիարակութեանը օժանդակող լուրջ ուղեցոյց մը:

ՄԱՆԿԱ-ն կարելի է տարածել որպէս դասագիրք: Չայն կարելի է օգտագործել մեր վարժարաններէն ներս, կիրակնօրեայ դպրոցներուն մէջ եւ կարելորագոյնը՝ մեր տուններէն ներս: Անոր միջոցաւ, կարելի է Աստուծոյ խօսքը լսել ու կարդալ Հայերէնով եւ անոր միջոցաւ կարելի է ամրացնել մեր ընտանիքներուն բարոյական շաղախը:

Քուէյթի եւ Արաբական Ծոցի երկիրներու Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեանի հովանաւորութեամբ եւ Պրն. Հրայր Ըեպէճեանի ներկայութեամբ, Քուէյթի Ազգային Վարժարանին մէջ, հանդիսաւորապէս կատարուեցաւ ՄԱՆԿԱ-յին շնորհանդէսը: Անցնող ամիսներուն, հայ հոգեւոր պետներուն եւ համայնքային պատասխանատուներուն քաջալերանքով, ՄԱՆԿԱ-ն լայն տարածում ունեցաւ Միջին Արեւելքէն ներս եւ Ծոցի երկիրներուն մէջ եւ այսօր, գրեթէ սպառած է ՄԱՆԿԱ-յի այս առաջին հրատարակութիւնը:

Այս առթիւ, կու գանք սրտագինս գնահատել ՄԱՆԿԱ-ն Հայերէնի թարգմանող տիկին Արտա Ըեպէճեանը: Երախտագիտութեան մեր խօսքը կ'ուղղենք Պրն. Հրայր Ըեպէճեանին, որ իր անձնական ջանքերուն կեդրոնացումով գլուխ հանեց այս կարելոր աշխատանքը: Թող որ բարին Աստուած օրհնէ Ըեպէճեան ամուլը եւ առիթ ընծայէ, որ անոնք, նորանոր ծրագիրներով եւ կրօնաբոյր հրատարակութիւններով հարստացնեն իրենց սեփական կեանքն ու Աստուածաշունչի ընկերակցութեան գործունեութեան դաշտը:

Երախտագիտութեան եւ օրհնութեան մեր զգացումները կը յայտնենք նաեւ Տէր եւ Տիկին Ալեքսան Փանոսեաններուն, որոնք, ի յիշատակ իրենց ողբացեալ ծնողներուն՝ Յովհաննէս եւ Հերմին Փանոսեաններուն, յանձն առին ՄԱՆԿԱ-յի հրատարակութեան մեկենասութիւնը:

Թող որ ՄԱՆԿԱ-ն ընթերցող հայ մանուկներու անմեղ շրթներով արտասանուող աղօթքները, խաղաղութիւն պարգեւէն ողբացեալ Յովհաննէս եւ Հերմին Փանոսեաններուն հոգիներուն եւ անոնց յիշատակը գործնականօրէն ապրեցնող հարազատներուն շնորհէն հոգեւոր մխիթարութիւն:

\*\*\*\*\*

### **Օրինակներ ստանալու համար դիմել.-**

HRAYR JEBEJIAN  
6 DAMASKINOUS STREET

FLAT 301  
1070  
NICOSIA, CYPRUS

Price USD 20 including postage.

